ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"02" մարտի 2023 թվական N 423-Ա

ք. Երևան

«11009 ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) 2023 թվականի «11009 Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելված 1-ի,

2) Ծրագրի 2023 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածությունը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանին:

02.03.2023

X

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ROBERT 4010840706

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի
2023 թվականի մարտի 02-ի
թիվ 423-Ա հրամանի

2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
«11009 ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Բովանդակություն

Հիմնախնդիր 2
Ծրագրի նպատակ 2
Ծրագրի նկարագրություն 3
Բաղադրիչ 1. «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ 3
1 «Գաղափարի փուլ» 4
2 «Մուտք դեպի շուկա փուլ» 4
Բաղադրիչ 2. Ինկուբացիոն և աքսելերացիոն հնարավորությունների ստեղծում 6
Բաղադրիչ 3. Տաղանդի ներգրավման բաղադրիչ 7
Բաղադրիչ 4. Թեմատիկ միջոցառումների անցկացում 7
Բաղադրիչ 5. Համագործակցություն հայկական աքսելերատորների հետ 8
2021-22թթ. ընթացքում տրամադրված դրամաշնորհների մնացորդի մարում 8
Ծրագրի սկզբունքները 9

1. Հիմնախնդիր

1. Ծրագրի մշակման հիմքում ընկած են ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363 որոշման հավելվածի 2.3-րդ կետով սահմանված նպատակները, որոնց համաձայն ՀՀ կառավարությունը շարունակելու է նպաստել նորարարական համակարգի զարգացմանը և տարբեր ոլորտներում համակողմանի ներդրմանը: Նորարարական համակարգի զարգացման գործընթացում առանցքային և նշանակալի դեր ունի ձեռնարկատիրական էկոհամակարգի կայացումը, քանի որ տնտեսությունում նորարարության հիմնական շարժիչ ուժերից են ձեռներեցները, որոնց կողմից գիտական արդյունքները և նոր գաղափարները առևտրայնացվում են ու ստեղծում նոր արժեք տնտեսությունում:

2. Մի շարք ոլորտային ուսումնասիրություններ[1] փաստում են, որ հայաստանյան ձեռնարկատիրական համակարգի բացերից են ձեռնարկատիրական կրթությունը, ձեռներեցության ֆինանսավորումը, տեխնոլոգիական ինկուբատորների և աքսելերատորների կայացման ցածր մակարդակը, ինչպես նաև կարևորում են կառավարության կողմից ներդրվող ծրագրերի անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն ձեռներեցության խթանմանը: Նշված համակարգային խնդիրների լուծման նպատակով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից 2023 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառումը:

2.Ծրագրի նպատակ

3. Ծրագրով նախատեսվում է խթանել Հայաստանի ազգային նորարարական համակարգի զարգացումը, ստեղծել անհրաժեշտ ինովացիոն միջավայրը նոր ընկերությունների ձևավորման ու առաջընթացի համար, այդպիսով՝ նպաստել նաև մարդկային կապիտալի զարգացմանը:

4.Ծրագիրը նպատակ ունի պետական միջամտությամբ լրացնելու հայաստանյան նորարարական համակարգում առկա բացերը՝ սկսելով թույլ զարգացած օղակներից: Մասնավորապես, նախատեսվում է սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին և թիմերին ապահովել ֆինանսավորման և աճի հնարավորություններով, ինչպես նաև ստեղծել նոր գիտելիքի ներհոսքի հնարավորություններ: Ծրագրի վերջնարդյունքում ակնկալվում է ունենալ տեխնոլոգիական սկսնակ ընկերություններ, որոնց որոշակի մասը պատրաստ կլինի ներդրողներից ներդրումներ ներգրավել:

---

[1] ԵՏՀ ՄԱԿ (2020). Նորարարության քաղաքականության պատկերը Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրների համար
Ամերիա ՓԲԸ (2020). Ձեռնարկատիրության Համաշխարհային Զեկույց Հայաստան 2019/2020

3.Ծրագրի նկարագրություն

5. Ծրագիրը բաղկացած է փոխկապակցված 5 ենթածրագրերից (բաղադրիչներից):

6. Բաղադրիչ 1. «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը «Գաղափարից մինչև բիզնես» ծրագրի միջոցով ֆինանսավորում կտրամադրի սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին և գիտահետազոտական թիմերին առևտրայնացնելու իրենց գաղափարները և նոր արժեք ստեղծելու տնտեսությունում:

Ծրագիրը նպատակ ունի նաև հանրայնացնել ձեռներեցության գաղափարը, բարձրացնել դրա նկատմամբ հետաքրքրվածությունը՝ վաղ շրջանում գտնվող և արդեն իսկ կայացած ընկերություններին ու հետազոտական խմբերին դրամաշնորհների տրամադրման միջոցով, ինչպես նաև խթանել բարձր տեխնոլոգիական լուծումների կիրառմամբ երկրում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը՝ միաժամանակ հզորացնելով Հայաստանի Հանրապետության ձեռնարկատիրական էկոհամակարգը: Այդ նպատակով մշակվել է «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագիրը, որի բաղադրիչների իրականացումը ՀՀ ստարտափ և ինժեներական էկոհամակարգի ընկերություններին թույլ կտա հաղթահարել առկա մարտահրավերները: Ծրագրի շրջանակներում կտրամադրվեն նաև խորհրդատվական, ինկուբացիոն և աքսելերացիոն աջակցություն, ինչը կնպաստի դրամաշնորհ ստացած ընկերությունների կայուն զարգացմանն ու ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդմանը:

Ծրագրի հանրայնացման և տեղեկացվածության բարձրացման նպատակով նախատեսվում է այցեր կատարել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ, մասնավորապես՝ դրանց բնագիտական ֆակուլտետներ, և ներկայացնել ծրագիրը: Նախատեսվում է նաև համագործակցել էկոհամակարգի այլ մասնակիցների հետ՝ ներգրավելու խոստումնալից թիմեր և գաղափարներ:

Դրամաշնորհներն ընկերություններին հնարավորություն կտան կայանալ և ապագայում ավելի գրավիչ ու վստահելի դառնալ վենչուրային ներդրումների, բանկային վարկավորման կամ պատվիրատուների համար: Սա նաև կօգնի աշխուժացնել ՀՀ վենչուրային կապիտալի շուկան:

Ծրագրի անուղղակի նպատակներից է նաև դրամաշնորհային ծրագրի ներուժի լիարժեք իրացումը: Այդ իսկ պատճառով բանակցություններ կանցկացվեն անհատ ներդրողների, առկա վենչուրային ընկերությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ համաֆինանսավորվող դրամաշնորհներ տալու կամ մրցույթում չհաղթած ընկերություններին աջակցելու նպատակով:

Էկոհամակարգի մասնակիցներին և ոլորտային մասնագետներին առնվազն նախատեսվում է ներգրավել դրամաշնորհների տրամադրման որոշումների կայացման ժամանակ:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի երկու ուղղություններով դրամաշնորհներ՝ «Գաղափարի փուլ» և «Մուտք դեպի շուկա փուլ»:

1) «Գաղափարի փուլ»

Բաղադրիչի շրջանակում նախատեսվում է դրամաշնորհների տեսքով ֆինանսավորում տրամադրել գաղափարի փուլում գտնվող սկսնակ ընկերություններին, որոնց կողմից ներկայացվող արտադրանքի և (կամ) ծառայության գաղափարը միտված է բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր արժեքի ստեղծմանը և (կամ) տեխնոլոգիաների կիրառմամբ արդի խնդիրների և մարտահրավերների լուծմանը: Դրամական հատկացման բյուջեի առավելագույն չափը կազմում է 150,000,000 (հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որը նախատեսվում է բաշխել մրցույթը հաղթահարած ընկերությունների միջև (յուրաքանչյուրին՝ մինչև 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ):

Օգտակար կարող են համարվել այն մտահղացումներն ու տեխնոլոգիական լուծումները, որոնք կկարողանան արդիականացնել ծառայությունների մատուցման որևէ ոլորտ՝ պետական կամ մասնավոր հատվածներում, թվայնացման, առողջապահական, գյուղատնտեսական և կրթական ոլորտներում, կամ տեխնոլոգիական լուծման շնորհիվ նպաստել սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը՝ բանակում, դպրոցներում, կրթական ոլորտում, հիվանդանոցներում, հյուրընկալության և էկոտուրիզմի, վերականգնվող էներգիայի, շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում և այլն:

2) «Մուտք դեպի շուկա փուլ»

Բաղադրիչի շրջանակում նախատեսվում է դրամաշնորհների տեսքով ֆինանսավորում տրամադրել շուկա մուտք գործելու փուլում գտնվող ընկերություններին, որոնց կողմից ներկայացվող արտադրանքի և (կամ) ծառայության նախատիպը միտված է բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր արժեքի ստեղծմանը և տեխնոլոգիաների կիրառմամբ արդի խնդիրների և մարտահրավերների լուծմանը: Դրամական հատկացման բյուջեի առավելագույն չափը կազմում է 200,000,000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը նախատեսվում է բաշխել մրցույթը հաղթահարած ընկերությունների միջև (յուրաքանչյուրին՝ մինչև 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ):

Վերոնշյալ երկու դրամաշնորհային մրցույթների հայտերն ընդունվելու են առցանց եղանակով. ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակիցը ներկայացնում է պահանջվող փաստաթղթերը և նկարագրում իր ամբողջ գաղափարը:

Հայտերի գնահատումն իրականացվում է երկու փուլով. առաջին փուլի ընթացքում Նախարարության ներկայացուցիչներից և փորձագետներից կազմված թիմը գնահատում է մասնակցի համապատասխանությունը մրցույթի չափորոշիչներին: Գնահատման առաջին

փուլը հաղթահարած մասնակիցները իրավունք են ունենում մասնակցել երկրորդ՝ պատկերավոր ներկայացման փուլին, որի ընթացքում մասնակցին տրվելու է 3 րոպե ժամանակ՝ ներկայացնելու իր գաղափարը:

Երկրորդ փուլի համար ստեղծվում է նախարարության գնահատող հանձնաժողով (հետագայում՝ հանձնաժողով) և ինկուբատորների և աքսելերատորների ներկայացուցիչների թիմ (հետագայում՝ թիմ):

Պատկերավոր ներկայացումն ավարտելուց հետո հանձնաժողովն ու թիմը իրականացնում են հարց ու պատասխան մասնակցի հետ, որի համար հատկացվում է 10-15 րոպե ժամանակ: Հարց ու պատասխանի ավարտից հետո հանձնաժողովի անդամները իրականացնելու են գնահատում նախօրոք սահմանված չափորոշիչների հիման վրա:

Թիմի անդամները հնչեցնում են իրենց կողմից մասնակցին առաջարկվող աջակցության և համագործակցության պայմանները:

Մասնակցին հնարավորություն է տրվում ընտրություն կատարել, թե որ ինկուբատորի կամ աքսելերատորի հետ է նախընտրում աշխատել և ինչու:

Դրամաշնորհ ստանալու համար պարտադիր պայման է որևէ ինկուբատորի կամ աքսելերատորի հետ համագործակցելը: Համագործակցությունից հրաժարվելը կարող է դիտարկվել որպես դրամաշնորհից հրաժարում:

Մասնակցի կողմից կայացված որոշումից հետո Հանձնաժողովը ներկայացնում է իր գնահատականը:

Եթե Մասնակիցը և որևէ ինկուբատոր կամ աքսելերատոր համագործակցության պայմանավորվածություն են ձեռք բերել, և գնահատող Հանձնաժողովը դրամաշնորհի տրամադրման դրական որոշում է կայացրել, ապա Մասնակիցը ստանում է դրամաշնորհը:

Մասնակիցը պարտավորվում է ստացված դրամաշնորհի շրջանակներում իրականացնել ծրագիրը և նախարարություն ներկայացնել համապատասխան հաշվետվությունները: Ընդ որում, այդ հաշվետվությունը պետք է հաստատվի նաև գործընկեր ինկուբատորի կամ աքսելերատորի կողմից:

Ինկուբատորը կամ աքսելերատորը պարտավորվում է պայմանավորված աջակցությունը տրամադրել Մասնակցին և դրա հաշվետվությունը ներկայացնել Նախարարությանը: Ընդ որում, այդ հաշվետվությունը պետք է հաստատվի նաև Մասնակցի կողմից:

3) Ինկուբատորներ և աքսելերատորներ

Ինկուբատորների և աքսելերատորների կազմում ներգրավված են ՀՀ ստարտափ էկոհամակարգը ներկայացնող ինկուբացիոն և աքսելերացիոն գործունեություն ծավալող ընկերությունների ներկայացուցիչները: Ինկուբատորները և աքսելերատորները նախապես Նախարարություն են ներկայացնում ստարտափ ընկերություններին տրամադրվող աջակցության գործիքակազմը և համագործակցության պայմանները:

7.Բաղադրիչ 2. Ինկուբացիոն և աքսելերացիոն հնարավորությունների ստեղծում

Շարունակելով ստարտափի զարգացման շղթայի տրամաբանությունը՝ ծրագրի երկրորդ բաղադրիչով նախատեսվում է սկսնակ ընկերությունների և թիմերի աճի համար համապատասխան ենթակառուցվածքների ապահովում: Բաղադրիչի հիմնական նպատակն է լրացնել ձեռնարկատիրական համակարգում առկա բացերը՝ կապված սկսնակ ընկերության զարգացման համար անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների հետ, որոնք ֆինանսական ռեսուրսների հասանելիության հետ միասին կարող են առաջընթաց ապահովել տեխնոլոգիական համակարգում:

Այս բաղադրիչով առաջարկվում է ոլորտի առաջատար կազմակերպությունների (կրթական հաստատություններ, ինկուբատորներ, աքսելերատորներ և այլն) հետ համագործակցության միջոցով գիտական և տեխնոլոգիական հիմքով ստարտափերի համար մշակել և ապահովել իրենց կարիքներին համապատասխան ինկուբացիոն և աքսելերացիոն բնույթի ծրագրեր: Նման ծրագրերը կաջակցեն սկսնակ ընկերություններին և թիմերին՝ խթանելով իրենց աճի տեմպը, թիմի անդամներին ապահովելով անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով նախատիպերի մշակման, բիզնես մոդելավորման, ֆինանսական պլանավորման, աճի ռազմավարությունների մշակման, ներդրողների առջև գործարար ծրագրի ներկայացման և այլ ուղղություններով:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար կանցկացվեն մրցույթներ, որոնց շրջանակում ֆինանսական միջոցներ կհատկացվեն այն կազմակերպություններին, որոնք կմշակեն և կանցկացնեն շահառու ընկերությունների և թիմերի հետագա աճին նպաստող ինկուբացիայի, աքսելերացիայի, բիզնես խորհրդատվության և աջակցության ծրագրեր:

Վերոնշյալ ծրագրերի համար առաջնային թիրախային խումբ կդիտարկվեն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացված դրամաշնորհային ծրագրերի շահառուները, վերջիններիս՝ դեպի շուկա մուտք գործելու փուլ անցնելու և տրամադրված դրամաշնորհների արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով: Որպես թիրախային երկրորդ խումբ կդիտարկվեն գաղափարի և շուկա մուտք գործելու փուլում գտնվող այլ սկսնակ ընկերություններ, որոնք կբավարարեն սահմանված պահանջներին:

8. Բաղադրիչ 3. Տաղանդի ներգրավման բաղադրիչ

Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, տեղական փոքր շուկան և այլ պայմանները՝ տեխնոլոգիական համակարգի զարգացման տեսանկյունից կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Հայաստանի և աշխարհի միջև կապերի ստեղծմանը և դեպի Հայաստան գիտելիքի ներհոսքի ապահովմանը: Այս նպատակին առաջարկվում է հասնել տաղանդի շարժունակության ծրագրերի միջոցով: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել սփյուռքահայ ձեռներեցներին թիրախավորող «Ներուժ» ծրագիրը:

«Ներուժ» ծրագիր

«Ներուժ» ծրագրի նպատակն է խթանել հայաստանյան ձեռնարկատիրական էկոհամակարգը՝ միաժամանակ նպաստելով հայրենադարձությանը և դեպի Հայաստան տաղանդի ներհոսքին: Ծրագրով նախատեսվում է աշխարհի տարբեր երկրներից հայազգի ձեռներեցներին և առաջատար մասնագետներից բաղկացած թիմերին ներգրավել՝ վերջիններիս տրամադրելով ֆինանսական և այլ բնույթի աջակցություն տեխնոլոգիական սկսնակ ընկերություններ Հայաստանում հիմնելու և զարգացնելու համար: Ծրագրի արդյունքում ակնկալվում է, մի կողմից, շահառուների համար ապահովել ձեռներեցությամբ զբաղվելու պայմաններ, զարգացնել ձեռնարկատիրական էկոհամակարգը և մյուս կողմից, նպաստել Հայաստանում սփյուռքից բարձր որակավորմամբ մասնագետների և կառավարչական տաղանդի ներգրավմանը:

9.Բաղադրիչ 4. Թեմատիկ միջոցառումների անցկացում

Հայաստանյան տեխնոլոգիական էկոհամակարգում առկա հիմնական խնդիրներից է նոր ստարտափերի ստեղծման և դրանց փոխակերպման համեմատաբար ցածր մակարդակը: Այս հիմնախնդրի լուծման նպատակով և որպես նախորդ բաղադրիչների արդյունավետությանը նպաստող օժանդակող միջոցառում նախատեսվում է իրականացնել թեմատիկ միջոցառումներ: Մասնավորապես՝

- *Թեմատիկ հաքաթոններ*՝ ուղղված Հայաստանի ներկա մարտահրավերների լուծմանը. Տարվա ընթացքում նախատեսվում է հաքաթոն, որը միտված կլինի Հայաստանում քվանտային տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկվածության և մասնագիտական կարողությունների մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կնպաստի միջազգային կազմակերպությունների և պետական մարմինների հետ Հայաստանի Հանրապետության հետագա համագործակցային հնարավորությունների ընդլայնմանը:
- *Ոլորտային միջոցառումների համաֆինանսավորում* ուղղված ոլորտային այլ կառույցների կողմից անցկացվող միջոցառումների մասնակի ֆինանսավորմանը: Նման միջոցառումներից են «Ձեռներեցության համաշխարհային գավաթը», «Սևան ստարտափ սամիթը», «Հավք ԱԹՍ մրցույթ», որոնք առանցքային դեր ունեն հայաստանյան տեխնոլոգիական ձեռներեցության էկոհամակարգում:

10. Բաղադրիչ 5. Համագործակցություն հայկական աքսելերատորների հետ

Ծրագրի շրջանակում նախատեսվում է դրամաշնորհների տեսքով ֆինանսավորում տրամադրել աքսելերացիոն ծրագրի մասնակցած ընկերություններին, որոնց կողմից ներկայացվող արտադրանքի և (կամ) ծառայության գաղափարը կամ նախատիպը ուղղված է բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր արժեքի ստեղծմանը և (կամ) տեխնոլոգիաների կիրառմամբ արդի խնդիրների և մարտահրավերների լուծմանը:

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, որը նախատեսվում է բաշխել մրցույթը հաղթահարած ընկերությունների միջև (յուրաքանչյուրին՝ մինչև 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ):

Վերոնշյալ դրամաշնորհային մրցույթի հայտերն ընդունվելու են առցանց եղանակով. ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակիցը ներկայացնում է պահանջվող փաստաթղթերը և նկարագրում իր ամբողջ գաղափարը:

11.2021-2022թթ. ընթացքում տրամադրված դրամաշնորհների մնացորդի մարում

Նախատեսվում է իրականացնել «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 17-րդ միջոցառման», 2021 (բեկումնային բաղադրիչ) և 2022 («Գաղափարի փուլում գտնվող պրոդուկտների համար» և «Շուկա մուտք գործելու փուլում գտնվող պրոդուկտների համար») թվականների ««Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ» ծրագրերի, ինչպես նաև «Ռոբոտաշինություն և տիեզերական սարքաշինություն» ծրագրի շրջանակում տրամադրված դրամաշնորհների մնացորդների մարումները:

4.Ծրագրի սկզբունքները

12.Ծրագրի բաղադրիչների իրականացման ընթացքում հաշվի են առնվելու տարածքային համաչափության, ոլորտային զարգացման, ներառականության, թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքները:

- *Տարածքային համաչափություն*

13.Տարածքային համաչափ զարգացում ապահովելու համար ծրագրի բաղադրիչների ուղղակի և անուղղակի շահառուներ կլինեն ոչ միայն Երևանի, այլ նաև ՀՀ մարզերում հիմնադրված և գործող կազմակերպությունները և քաղաքացիները:

- *Ոլորտային զարգացում*

14.Ծրագրի բաղադրիչներն ուղղված կլինեն տնտեսության մի շարք ոլորտներում տեխնոլոգիական առաջընթացի ապահովմանը և բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ այդ ոլորտներում արտադրողականության բարձրացմանը:

- *Ներառականություն և թափանցիկություն*

15.Ծրագրի բաղադրիչների շրջանակում նախագծերի, ընտրության չափանիշների մշակման և հայտերի գնահատման բոլոր փուլերում կապահովվի մասնագիտական շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, ինչպես նաև հասարակության համար կապահովվի գործընթացի առավելագույն թափանցիկությունը:

- *Հաշվետվողականություն*

16.Ծրագրի շրջանակներում կիրականացվի շարունակական մոնիտորինգ՝ հաշվետվողականություն ապահովելու, ինչպես նաև ներդրումների արդյունավետության գնահատում կատարելու նպատակով:

- *Ծրագրի ազդեցության գնահատում*

17.Կարևորելով հարկատուների առջև հաշվետվողականության սկզբունքը՝ կատարվելու է ծրագրի բաղադրիչների արդյունքների գնահատում: Գնահատման ընթացքում հաշվի կառնվեն շահառու ընկերությունների, թիմերի և անձանց կողմից գրանցած հաջողությունները՝ արտադրանքի կամ մատուցված ծառայությունների զարգացման և շուկայում հեղինակության ձևավորման առումով:

Հավելված 2
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի
2023 թվականի մարտի 02-ի
թիվ 423-Ա հրամանի

Ծրագրի 2023 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածություն

	Ծրագրի բաղադրիչներ	Ընդհանուր բյուջե	Յուրաքանչյուր արժեք	Արդյունքային ցուցանիշ
		Հազար դրամ	*Հազար դրամ*	
1.	**«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ**	**350,000**		**Մինչև 66 կազմակերպություն**
	Գաղափարի փուլում գտնվող պրոդուկտների համար դրամաշնորհներ	*150,000*	*5,000*	*Մինչև 40 կազմակերպություն*
	Շուկա մուտք գործելու փուլում գտնվող պրոդուկտների համար դրամաշնորհներ	*200,000*	*10,000*	*Մինչև 26 կազմակերպություն*
2.	**Ինկուբացիոն և աքսելերացիոն հնարավորությունների ստեղծում**	**10,000**		
	Աքսելերացիոն ծրագիր 2022	*10,000*	*10,000*	*1 հաղթող կազմակերպություն*
3	**Տաղանդի ներգրավման ծրագիր**	**70,000**		
	«Ներուժ» ծրագիր	*70,000*		*Մինչև 3 կազմակերպություն*
4	**Թեմատիկ միջոցառումների անցկացում**	**10,000**		
	Ոլորտային միջոցառումների համաֆինանսավորում	*10,000*	*10,000*	*1 միջոցառում*
5	**Համագործակցություն հայկական աքսելերատորների հետ**	**30,000**	*5,000*	*Մինչև 6 կազմակերպություն*
6	**2022թ. ընթացքում կնքված դրամաշնորհային պայմանագրերի գումարների մնացորդի մարում**	**30,000**		
	ԸՆԴԱՄԵՆԸ	**500,000**		